ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԾՁԲ-7-18

ք. Երևան 24.10 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ներկայացուցչական արարողակարգային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, իսկ Պատվիրատուն ստանձնում է մատուցված ծառայությունների դիմաց վճարելու (հավելված N 2) պարտավորությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու

փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12653940 (տասներկու միլիոն վեց հարյուր հիսուներեք հազար ինն հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 10.12.2019թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բուռնազյան 7
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00851011
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ս.թ. օգոստոսի 1-ից 15-ը Մոնթե Մելքոնյանի անվան ուսումնամարզական վարժարանում անցկացված «Խաղաղության Մարտիկ» միջազգային համաբանակային մրցույթի մասնակիցներին տրված սննդի, ֆուրշեթի, տոնական ճաշի, ս.թ. սեպտեմբերի 18-ից 26-ը անցկացվելիք զորավարժության հրամանատարական կետի զինծառայողներին և ս.թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը անցկացվելիք ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժության պահեստային հրամանատարական կետի զինծառայողների սննդամթերքով ապահովման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	
ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	ս.թ. օգոստոսի 1-ից 15-ը	
	թեյ	Գրիֆիլդ 2գ
	սուրճ	սուրճ Փարիզյան N5
	կաթ կակաո	կաթ Մարիաննա 1լ , կակաո Nescafe 200գ
	շիլա բրնձով	Հավի միս, բրինձ
	ձվածեղ	ձու, կարագ, ձեթ
	տաք բրուսկետաներ	Հաց, խոզապոխտ, գունավոր պղպեղ
	կրուասան	Այուր, ձու, շոկոլադե կրեմ
	միրգ	Խնձոր, դեղձ, Խմերուկ, եմիշ
	խաշած ձու	Ձու Արզնի
	խաշած հավի նրբերշիկ	Հավի կրծքամիս, ալյուր, ձեթ
	կաթնաշոռ, թթվասեր	կաթնաշոռ ռոզմիլկ, թթվասեր Ռոզմիլկ
	Ապուր բանջարեղենային	Դդմիկ, սմբուկ, կարտոֆիլ
	Բրինձ բանջարեղենով	Բրինձ, գազար, գունավոր պղպեղ
	Մակարոն բանջարեղենով	Մակարոն, ծաղկակաղամբ
	Հավի մսով ուտեստ	Հավի միս, կարտոֆիլ, ձեթ ,պանիր
	Տավարի մսով ուտեստ	Տավարի միս, ձեթ
	Բանջարեղենով ու մսով ուտեստ	Հավի միս,դդմիկ, սմբուկ, գազար,բոռկոլի
	Լոլիկ, վարունգ	լոլիկ, վարունգ
	Աղցան օլիվյե	Կարտոֆիլ, ֆիլե, գազար, գարոխ, թթվասեր
	Աղցան բանջարեղենային	Բազուկ, լոբի, թթու վարունգ, կարտոֆիլ
	Աղցան հազարով	Հազար, կարմիր բողկ,
	Ապուր հավի մսով	Հավի միս, բրինձ, կարտոֆիլ, կանաչի
	Սիսեռ բանջարեղենով	Սիսեռ, սմբուկ, ծաղկակաղամբ, գազար
	Հաճարով փլավ	Հաճար, շամպինյոն
	Տավարի մսով ուտեստ	Խաշլամա, տավարի միս, կարտոֆիլ, սոխ

	Հավի մսով ուտեստ	Հավի տապակա, կարտոֆիլ
	Աղցան գազարով	Կորեական գազար, սև պղպեղ
	Աղցան բազուկով	Բազուկ,ընկույզ, թթվասեր
	Ջուր, ջերմուկ	բնական աղբյուրի ջուր բյուրեղ 0.5լ պլաստիկ տարա
	Կոլա, ֆանտա, սփրայթ	գազավորված ջուր կոլա 0.5լ պլաստիկ տարա
	Կոմպոտ	Խնձոր, շաքարավազ, ջուր
	Մածուն	մածուն ռոզմիլկ
	Կանաչի	Համեմ, ռեհան սոխ, կոտեմ
	Պանրի տեսականի	Սուլուգունի, Լոռի, ռոքֆոր
	Սպիտակ հաց, սև հաց, լավաշ	Սպիտակ հաց, սև հաց, լավաշ
ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 3-ից 13-ը**	
	Կանապեներ	
	ռոքֆորով	Հացիկ.ռոքֆոր պանիր
	պիկանտ երշիկով	Հացիկ,երշիկ
	սմբուկի ռուլետով	Սմբուկի շերտերով ռուլետ
	Շերտավոր կարկանադակներ	
	պանրով	Շերտավոր խմոր պանր միջուկով
	հավով ու սնկով	Շերտավոր խմոր հավի,սնկի միջուկով
	Խմորեղեն	
	գաթա	Շերտավոր խմոր խորիզի միջուկով
	էկլեր	Կառպատկա Խմոր եփված խմորով
	շոկոլադապատ բանան	Շաքարավազով խմոր,շոկոլադոպատ բանանով
	Ըմպելիք	
	կոլա,ֆանտա,սփրայթ	գազավորված ջուր կոլա 0.5լ պ. Տարա
	ջուր,հանքային ջուր	բնական աղբյուրի ջուր 0.5 պ. Տարա
	բնական հյութեր	Ծիրանի
	Միրգ	
	Մրգային կոմպոզիցիա	Գիլաս, նարինջ, խնձոր, բանան,
	Կանապեներ	
	կնջութապատ ֆետա պանրով ու չերի պոմիդորով	Հացիկ վրան ֆետա պանիր ու լոլիկ
	շվեյցարական պանրով ու պաշինայով	Հացիկ պանրով ու պաշինայով
	սմբուկով ռուլետ	Կաթնաշոռ փաթաթված սմբուկի շերտերով
	հորթի ռուլետ սալորաչրով ու ծիրանաչրով	Հորթի ֆիլե սալորաի և ծիրանաչրի միջուկով

	Բրուսկետաներ	
	կլասսիկ	Հացիկ վրան լոլիկ ու կանաչի
	երշիկով	Հացիկ վրան երշիկ ու գունավոր պղպեղ
	Աղցաններ	
	կապրեզե չոփիկի վրա	Լոլիկ, պանիր սոուսով, չոպիկի վրա
	Խմորեղեն	
	մրգային թարթեր	Շաքարավազով խմոր,եփված կրեմով հատապտուղներով
	մարենգո	Բեզե, սերուցքային կրեմ ու միրգ
	արևելյան	Ֆիլոի խմոր բեզեյի ու ընկույզի միջուկով
	Ըմպելիք	
	կոլա,ֆանտա,սփրայթ	գազավորված ջուր կոլա 0.5լ պ.տարա
	ջուր,հանքային ջուր 0.5 լ	բնական աղբյուրի ջուր 0.5 պ. Տարա
	բնական հյութեր	Սալորի
	Միրգ	
	Մրգային բուրգ սեզոնային մրգերով	Ձմերուկ, եմիշ, դեղձ, խնձոր
Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. օգոստոսի 13-ին**	
	պանրի տեսականի	Սոլուգունի, լոռի
	ձիթապտուղ + լիմոն	ձիթապտուղ copoliva, լիմոն
	կանաչի + ծիծակ	Համեն, ռեհան,սոխ,թարխուն
	պոմիդոր, վարունգ	Պոմիդոր վարունգով աղցան
	մսային ասորտի	երշիկ աթենք, պրոշուտու, ապղտած խոզի ֆիլե,բաստուրմա աթենք
	Աղցաններ	
	կապրեզե	Լոլիկ,պանիր,սոուս
	քամած մածուն, վարունգով	Քամած մածուն 100գ վարուգ կտրատված20գ
	սմբուկով ու կաթնաշոռով ռուլետներ	Կաթնաշոռ 20գ փաթաթված սմբուկիշերտերով
	Տաք ուտեստներ	
	խոզի խորոված	Խոզի միս,ձեթ
	գառան խորոված	գառի միս, ձեթ
	հավի խորոված	Հավի միս, ձեթ
	բանջարեղենի խորոված	Կարտոֆիլ, ծաղկակաղամբ,

		սմբուկ,գազար
	կարտոֆիլի խորոված	Կարտոֆիլի խորոված շերտերով
	խորոված ստեղլյադ	Ստեղլեցի ծորոված համեմունքներով լիմոնով
	Արարատ 5 տարի	կոնյակ Արարատ 5 տարի 0.5լ ապակյա տարա
	Իջևան ԿԱՐՄԻՐ	գինի Իջևան կարմիր 0.7լ
	Իջևան ՍՊԻՏԱԿ	Գինի Իջևան Սպիտակ 0.7լ
	Ըմպելիքներ	
	ջուր, հանքային ջուր	բնական աղբյուրի ջուր բյուրեղ 0.5լ պլաստիկ տարա
	կոլա, ֆանտա	գազավորված ջուր կոլա 0.5լ պլաստիկ տարա
	կոմպոտ	Լիմոն, շաքարավազ, ջուր
	հաց, լավաշ	հաց, լավաշ
	ս.թ. սեպտեմբերի 18-ից 26-ը	
	Վիչինա	վիչինա «Ցարսկիյ Պրոդուկտ»
	Նրբերշիկ	Նրբերշիկ «Ցարսկիյ Պրոդուկտ»
	Գլուխ պանիր /Լոռի/	պանիր Լոռի Ամասիա
	Խառը կանաչի	համեմ, սամիթ, մաղադանոս, սոխ, ռեհան
	Վարունգ	վարունգ
	Լոլիկ, վարունգ	լոլիկ
	Ձեյթուն	գեյթուն copoliva 4կգ
	Կիտրոն	կիտրոն
	Կոլա 0.5	կոլա 0.5լ պլաստիկ տարա
	Ֆանտա 0.5	ֆանտա 0.5լ պլաստիկ տարա
	Ջերմուկ 0.5	հանքային ջուր Ջերմուկ 0.5լ պլաստիկ տարա
	Արզնի 0.5	հանքային ջուր Արզնի 0.5լ պլաստիկ տարա
	Նոյ 0.5	բնական ջուր Նոյ 0.5լ պլաստիկ տարա
	Մանանեխ	մանանեխ 125 գր
	Ատամմաքրիչ	ատամմաքրիչ տուփի մեջ 100 հատ
	Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային պարկ	մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային պարկ 100 հատ
ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	**ս.թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը**	
	Վիչինա	վիչինա «Ցարսկիյ Պրոդուկտ»
	Նրբերշիկ	Նրբերշիկ «Ցարսկիյ Պրոդուկտ»
	Գլուխ պանիր /Լոռի/	պանիր Լոռի

		Ամասիա
	Խառը կանաչի	համեմ, սամիթ, մաղադանոս, սոխ, ռեհան
	Վարունգ	վարունգ
	Լոլիկ, վարունգ	լոլիկ
	Ձեյթուն	զեյթուն copoliva 4կգ
	Կիտրոն	կիտրոն
	Կոլա 0.5	կոլա 0.5լ պլաստիկ տարա
	Ֆանտա 0.5	ֆանտա 0.5լ պլաստիկ տարա
	Ջերմուկ 0.5	հանքային ջուր Ջերմուկ 0.5լ պլաստիկ տարա
	Արզնի 0.5	հանքային ջուր Արզնի 0.5լ պլաստիկ տարա
	Նոյ 0.5	բնական ջուր Նոյ 0.5լ պլաստիկ տարա
	Մանանեխ	մանանեխ 125 գր
	Ատամմաքրիչ	ատամմաքրիչ տուփի մեջ 100 հատ
	Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային պարկ	մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային պարկ 100 հատ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Տնօրեն

Գ. ՄԱՐՏԱՐՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ	Անհրաժեշտ քանակը	Միավորի գինը՝ 1 անձի համար նախատեսված մթերքի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ծառայության մատուցումը 2019թ.
1	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	դրամ	1	2250	10282500	Օգոստոսի 1-15
2	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	դրամ	1	60	338496	Օգոստոսի 3-13
3	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	դրամ	1	120	1440000	Օգոստոսի 13
4	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	դրամ	1	25	146750	Սեպտեմբերի 18-26
5	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	դրամ	1	70	446194	Սեպտեմբերի 24-հոկտեմբերի 5

* **Մատակարարման վայրը և ժամկետները**

Ծառայության կատարումը, մատուցվող ծառայությունների վայրը՝ 1-ից 3-րդ չափաբաժինների մասով՝ ք.Դիլիջան, Ս.Մելքոնյանի անվան վարժարան, 4-րդ չափաբաժնի մասով՝ Արմավիրի զորավարժարան, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ Սիսիանի օդանավակայան հասցեներում:

**

Սույն ծառայությունների կատարման համար կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո դրույթները տարածվում են մինչև պայմանագրի կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 08.02.2018թ.N104-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ժգ. պարբերության:

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-7-18 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ., ընդ որում՝		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	98391160/1/1/1	12653940	12653940	12653940

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ՄԱԾՁԲ- 7-18 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1

N ՄԱԾՁԲ-7-18 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (Պատվիրատուի անվանումը)-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (Կատարողի անվանումը)-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N _____ (պայմանագրի համարը) պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն